ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2217 գ. Գեղաշեն, 1-ին փողոց 30 Վարչական շենք, Հեռ. (060) 286013 , էլ.փոստ gechashen67@mail.ru

06.10.2017թ. N01/161-17

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Ձեր հրապարակմանն ենք ուղարկում Գեղաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 3 էջ

Համայնքի ղեկավար՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Հովհաննիսյան
Հեռ. 077427455

ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵԼՔ No 161
«06» 10 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 86

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով, Գեղաշեն համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 21-ի N 50-Ա որոշումով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի ուսումնասիրության ակտերը և համայնքի բնակիչների դիմումները, որոշում եմ.

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման կից հավելվածում նշված բնակիչների ընտանիքները գտնվում են սոցիալական ծանր վիճակում համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից կանխիկ որպես օգնություն հատկացնել յուրաքանչյուր ընտանիքին, համաձայն կից ցուցակի:
2.Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Հայկուհի Անտոնյանին 7 աշխատանքային օրվա ժամկետում ապահովել գումարի վճարումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 29
գ. Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 87

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանի հավելվածի 11-րդ կետով, որոշում եմ.

1.2017 թվականի հոկտեմբերի 30-ին, ժամը 1100-ին նշանակել Գեղաշեն համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1) համայնքային ծառայող Լուսինե Հովհաննիսյանի հերթական ատեստավորում.
2.Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դրվում են համայնքապետարանի գլխավոր մասնագետ Զաքարիա Վարդանյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20/IX թ.
գ.Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 88

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 148 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝որոշում եմ.

1. Գեղաեեն համայնքի ղեկավարի 2015 թվականի նոյեմբերի 13-ի "Բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասին" N 148 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Գեղաշեն համայնքի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի 12 հասցեում գտնվող հողամասի, բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ Էդվարդ Աղասու Ղարիբյանի սեփականության իրավունքը վերականգնելու մասին».

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Վերականգնել Գեղաշեն համայնքի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի 12 հասցեում (կադաստրային ծածկագիր 07-023-0062-0030) գտնվող՝ Էդվարդ Աղասու Ղարիբյանի (ծնված՝ 1950 թվականի օգոստոսի 12-ին) սեփականության իրավունքը՝ 0,067377հա բնակելի կառուցապատման հողամասի և այդ հողամասի վրա առկա 1989 թվականին կառուցված 104.28ք.մ. արտաքին մակերեսով բնակելի տան, 5.22ք.մ. արտաքին մակերեսով աստիճանավանդակի, 27.47ք.մ. արտաքին մակերեսով նկուղի, 2.97ք.մ. արտաքին մակերեսով աստիճանավանդակի և 52.8ք.մ. արտաքին մակերեսու ձեղնահարկի նկատմամբ».

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20/I թ. նոյեմբեր 03
գ.Գեղաշեն